ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

17.06.2019թ.
ք. Երևան

Քաղաքացիական գործ
թիվ ԵԴ/14050/02/18

ՈՐՈՇՈՒՄ

թիվ ԵԴ/14050/02/18 քաղաքացիական գործի ընդդատության մասին

1. Գործի դատավարական նախապատմությունը և ընդդատության հարցի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները.

Հասմիկ Սողոմոնյանը 12.07.2018թ. հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ պատասխանող Պողոս Բադալյանի, երրորդ անձ՝ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության մարմնի՝ ամուսնությունը լուծելու, անչափահաս երեխայի բնակության վայրը սահմանելու, ալիմենտ բռնագանձելու և համատեղ ամուսնական կյանքում ձեռք բերված գույքից բաժինն առանձնացնելու պահանջների մասին:

Հայցադիմումում հայցվորի հաշվառման հասցե է նշվել՝ ք. Երևան, Բաբաջանյան փողոց, 87 շենք, 48 բնակարանը:

Հայցադիմումում հայցվորը նշել է նաև, որ պատասխանողի հետ համատեղ ամուսնական կյանքի ընթացքում ունեցել են մեկ երեխա՝ 16.12.2016թ. ծնված Արեն Պողոսի Բադալյանը, ***որն ապրում է իր հետ և ինքն է զբաղվում երեխայի խնամքով:***

Հայցադիմումին կից ներկայացվել է հայցվորի անձնագրի պատճենը, համաձայն որի՝ ***հայցվոր Հասմիկ Սողոմոնյանը 12.05.2016 թվականից հաշվառված է ք. Երևան, Բաբաջանյան փողոց, 87 շենք, 48 բնակարան հասցեում:***

Դատարանի (դատավոր՝ Էդ. Սեդրակյան) 18.07.2018թ. որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Հայցվորին դատական ծանուցագիրն ուղարկվել է հայցադիմումում նշված ք. Երևան, Բաբաջանյան փողոց, 87 շենք, 48 բնակարան հասցեով, որը ստորագրությամբ ստացվել է:

30.08.2018թ. կայացված՝ նախնական դատական նիստ նշանակելու մասին որոշումը հայցվորին ուղարկվել է ք. Երևան, Բաբաջանյան փողոց, 87 շենք, 48 բնակարան հասցեով, որը ստորագրությամբ ստացվել է:

Դատավոր Էդ. Սեդրակյանի՝ այլ դատարանի դատավոր տեղափոխվելու կապակցությամբ սույն քաղաքացիական գործը մակագրվել է Դատարանի դատավոր Ա. Մկրտչյանին:

Դատարանի (**դատավոր՝ Ա. Մկրտչյան**) 01.10.2018թ. որոշմամբ թիվ ԵԴ/14050/02/18 քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ:

Հայցվորին դատական ծանուցագիրն ուղարկվել է ք. Երևան, Բաբաջանյան փողոց, 87 շենք, 48 բնակարան հասցեով, որը ստորագրությամբ ստացվել է:

Հետագա դատավարական գործողությունների վերաբերյալ ևս հայցվորի ծանուցումն իրականացվել է ք. Երևան, Բաբաջանյան փողոց, 87 շենք, 48 բնակարան հասցեով:

Գործում առկա է հայցվորի կողմից 17.12.2018թ. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովին ներկայացված հայտարարությունը, որի համաձայն՝ վերջինս հանձնաժողովին տեղեկացրել է, որ ինքն ու իր անչափահաս որդին բնակվում են ոչ թե ք. Երևան, Բաբաջանյան փողոց, 87 շենք, թիվ 48 բնակարանում, այլ՝ Արմավիրի մարզի Մրգաշատ համայնքում՝ 11-րդ փողոցի թիվ 33 տանը, իսկ ք. Երևան, Բաբաջանյան փողոց, 87 շենք, թիվ 48 բնակարան հասցեում պարզապես հաշվառված է, սակայն ամուսնությունից հետո՝ 2016թ.-ի փետրվարից, այդտեղ չի բնակվել, այլ բնակվել է իր ամուսնու տանը՝ Արմավիրի մարզի Մրգաշատ համայնքի 13-րդ փողոցի թիվ 35 տանը:

19.04.2019թ.-ին պատասխանող Պողոս Բադալյանի ներկայացուցիչ Նաիրա Պետրոսյանը դիմում է ներկայացրել Դատարան, որով հայտնել է, որ հայցվորը և պատասխանողը բնակվում են Արմավիրի մարզի Մրգաշատ գյուղում, ուստի սույն քաղաքացիական գործն ընդդատյա չէ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանին:

Պատասխանողի ներկայացուցիչը միջնորդել է թիվ ԵԴ/14050/02/18 քաղաքացիական գործն ուղարկել ըստ ընդդատության՝ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Դատարանի (**դատավոր՝ Ա. Մկրտչյան**) 26.04.2019թ. որոշմամբ պատասխանող Պողոս Բադալյանի ներկայացուցիչ Նաիրա Պետրոսյանի միջնորդությունը բավարարվել է և թիվ ԵԴ/14050/02/18 քաղաքացիական գործը հանձնվել է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ալիմենտ բռնագանձելու կամ հայրությունը որոշելու վերաբերյալ հայցը կարող է ներկայացվել հայցվորի հաշվառման կամ բնակության վայրի առաջին ատյանի դատարան:

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ ամուսնալուծության վերաբերյալ հայցը կարող է ներկայացվել հայցվորի հաշվառման կամ բնակության վայրի առաջին ատյանի դատարան, եթե պատասխանողն օրենքով սահմանված կարգով ճանաչվել է անհայտ բացակայող կամ անգործունակ, գտնվում է կալանքի տակ կամ դատապարտված է ազատազրկման հետ կապված պատժի, ինչպես նաև այն դեպքերում, երբ անչափահաս երեխան գտնվում է հայցվորի մոտ:

Թիվ ԵԴ/14050/02/18 քաղաքացիական գործով հայցվոր Հասմիկ Թաթուլի Սողոմոնյանի հաշվառման հասցեն է ք. Երևան, Բաբաջանյան փողոց, 87 շենք, թիվ 48 բնակարան, հայցադիմումով՝ ի թիվս այլ պահանջների, ներկայացվել են նաև ամուսնությունը լուծելու և ալիմենտ բռնագանձելու մասին պահանջներ, ուստի հայցը հարուցվել է հայցվորի հաշվառման վայրի դատարան և այն վարույթ է ընդունվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում:

17.12.2018թ.-ին Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովին հայցվորի կողմից ներկայացված հայտարարության համաձայն՝ վերջինս հանձնաժողովին տեղեկացրել է, որ ինքն ու իր անչափահաս որդին բնակվում են ոչ թե ք. Երևան, Բաբաջանյան փողոց, 87 շենք, թիվ 48 բնակարանում, այլ՝ Արմավիրի մարզի Մրգաշատ համայնքում՝ 11-րդ փողոցի թիվ 33 տանը, իսկ ք. Երևան, Բաբաջանյան փողոց, 87 շենք, թիվ 48 բնակարան հասցեում պարզապես հաշվառված է, սակայն ամուսնությունից հետո՝ 2016 թվականի փետրվարից այդտեղ չի բնակվել, այլ բնակվել է իր ամուսնու տանը՝ Արմավիրի մարզի Մրգաշատ համայնքի 13-րդ փողոցի թիվ 35 տանը:

Այսինքն, թե կողմերը և, թե վերջիններիս անչափահաս որդին բնակվում են Արմավիրի մարզի Մրգաշատ համայնքում:

19.04.2019 թվականին պատասխանող Պողոս Բաղալյանի ներկայացուցիչ Նաիրա Պետրոսյանը դիմել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան և հայտնելով այն մասին, որ կողմերը բնակվում են Արմավիրի մարզի Մրգաշատ գյուղում, ուստի սույն քաղաքացիական գործն ընդդատյա չէ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանին, միջնորդել է թիվ ԵԴ/14050/02/18 քաղաքացիական գործն ուղարկել Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքի 21-րդ կամ 22-րդ հոդվածով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործը հանձնվում է այլ դատարանի քննությանը, եթե պատասխանողը մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելն առարկում է գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ:

Սույն գործի շրջանակներում ներկայացվել են ոչ միայն ամուսնությունը լուծելու և ալիմենտ բռնագանձելու մասին պահաջներ, այլ նաև ներկայացվել են անչափահաս երեխայի բնակության վայրը սահմանելու և համատեղ ամուսնական կյանքում ձեռք բերված գույքից բաժինն առանձնացնելու մասին պահանջներ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության վերջին հայտնի վայրի առաջին ատյանի դատարան, եթե այլ բան սահմանված չէ սույն օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Սույն դատական ակտով վերը նշված հիմնավորումների ուժով հայցադիմումը վարույթ է ընդունվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասով և 22-րդ հոդվածի 4-րդ և 7-րդ մասերով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ, թիվ ԵԴ/14050/02/18 քաղաքացիական գործով ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում չի կայացվել և պատասխանողի ներկայացուցիչը մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելն առարկում է գործը Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում քննելու վերաբերյալ, ուստի գտնում եմ, որ միջնորդությունը ենթակա է բավարարման և թիվ ԵԴ/14050/02/18 քաղաքացիական գործը պետք է հանձնել Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը»:

Թիվ ԵԴ/14050/02/18 քաղաքացիական գործը 08.05.2019թ. ուղարկվել է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Հիշյալ քաղաքացիական գործը 16.05.2019թ. մակագրվել է դատավոր Գ. Ֆիդանյանին:

27.05.2019թ. դատավոր Գ. Ֆիդանյանի կողմից կայացվել է որոշում գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու վերաբերյալ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Սույն գործով տարածքային ընդդատության հարցը որոշելիս նախ և առաջ անհրաժեշտ է պարզել հայցադիմումը վարույթ ընդունելիս արդյոք պահպանվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 4-րդ և 7-րդ կետերով սահմանված տարածքային ընդդատության կանոնները:

17.12.2018թ-ին հայցվոր Հասմիկ Սողոմոնյանը Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովին ներկայացրել է հայտարարություն այն մասին, որ ինքն ու իր անչափահաս որդին բնակվում են ոչ թե ք. Երևան, Բաբաջանյան փողոց, 87 շենք, թիվ 48 բնակարանում, այլ՝ Արմավիրի մարզի Մրգաշատ համայնքում՝ 11-րդ փողոցի թիվ 33 տանը, իսկ ք. Երևան, Բաբաջանյան փողոց, 87 շենք, թիվ 48 բնակարան հասցեում պարզապես հաշվառված է, սակայն ամուսնությունից հետո՝ 2016թ-ի փետրվարից այդտեղ չի բնակվել, այլ բնակվել է իր ամուսնու տանը՝ Արմավիրի մարզի Մրգաշատ համայնքի 13-րդ փողոցի թիվ 35 տանը:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի ա, բ, գ կետերի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 4-րդ և 7-րդ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ դատարանը պետք է քննի նաև անչափահաս երեխայի բնակության վայրը սահմանելու, ալիմենտ բռնագանձելու և համատեղ ամուսնական կյանքում ձեռք բերված գույքից բաժինն առանձնացնելու

պահանջները ամուսնալուծության պահանջի հետ միասին ներկայացվելու դեպքում և, քանի որ հայցվորի անչափահաս երեխան գտնվում է նրա խնամքին, հետևաբար վերջինս օգտվել է իր հայեցողությամբ հայցը դատարան ներկայացնելու իրավունքից, այն է՝ հաշվառված լինելով ք. Երևան, Բաբաջանյան փողոց, 87 շենք, թիվ 48 բնակարան հասցեում, հայցը հարուցել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, տվյալ դեպքում ընտրելով իր հաշվառման վայրի դատարանը:

Վերոգրյալից հետևում է, որ հայցվորը հայցը ներկայացրել է իր հաշվառման վայրի դատարան, օգտվելով իր հայեցողությամբ հայցը դատարան հարուցելու իրավունքից, ուստի այն հարուցվել է տարածքային ընդդատության կանոնների պահպանմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 4-րդ մասը կիրառելիս անհրաժեշտ է երկու վավերապայմանների միաժամանակյա առկայություն, այն է՝ 1-ին՝ գործը պետք է վարույթ ընդունված լինի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ և 22-րդ հոդվածներով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ և 2-րդ՝ պատասխանողը մինչև ապացուցման բեռ բաշխելու մասին որոշում կայացնելը պետք է առարկի գործը տվյալ դատարանում քննելու համար:

Սույն գործով հայցվորը իր հայեցողությամբ հայցը հարուցել է իր հաշվառման վայրի դատարան և գործը վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների պահպանմամբ, հետևաբար միայն պատասխանողի ներկայացուցիչ Ն. Պետրոսյանի միջնորդությունն այն մասին, որ առարկում է, որպեսզի գործը քննվի Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում, բավարար չէ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ տարածքային ընդդատության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը:

Վերոգրյալ հիմնավորումների պայմաններում դատարանը համաձայն չէ, որ սույն գործը ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հետևաբար անհրաժեշտ է թիվ ԵԴ/14050/02/18 քաղաքացիական գործը ուղարկել ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին գործի տարածքային ընդդատությունը որոշելու համար»:

<u>2. Կիրառելի իրավական նորմերը, պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 21-րդ հոդվածը սահմանում է քաղաքացիական գործերի ընդհանուր տարածքային ընդդատությունը, որի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության վերջին հայտնի վայրի առաջին ատյանի դատարան, ***<u>եթե այլ</u>***

բան սահմանված չէ սույն օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Հարկ է նկատել, որ Օրենսգրքով սահմանված է այլ բան, մասնավորապես՝ սահմանված են հատուկ կանոններ կամ բացառություններ, որոնք որոշակի հանգամանքների առկայության դեպքում հնարավորություն են ընձեռում շեղվել հայց ներկայացնելու ընդդատության ընդհանուր կանոններից:

Այսպես.

Օրենսգրքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ***ալիմենտ բռնագանձելու*** կամ հայրությունը որոշելու վերաբերյալ հայցը կարող է ներկայացվել ***հայցվորի հաշվառման*** կամ բնակության ***վայրի առաջին ատյանի դատարան:***

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ ***ամուսնալուծության վերաբերյալ հայցը*** կարող է ներկայացվել ***հայցվորի հաշվառման*** կամ բնակության ***վայրի առաջին ատյանի դատարան***, եթե պատասխանողն օրենքով սահմանված կարգով ճանաչվել է անհայտ բացակայող կամ անգործունակ, գտնվում է կալանքի տակ կամ դատապարտված է ազատազրկման հետ կապված պատժի, ***ինչպես նաև այն դեպքերում, երբ անչափահաս երեխան գտնվում է հայցվորի մոտ:***

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմաններից բավական է միայն մեկի կամ թվարկված պայմաններից առնվազն մեկի առկայությունը, եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «կամ» շաղկապով բաժանված պայմաններով:

Օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը տարածքային ընդդատության կանոնների պահպանմամբ իր վարույթ ընդունած գործը պետք է քննի ըստ էության, թեկուզև այն հետագայում դարձել է ընդդատյա այլ դատարանի:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքի 21-րդ կամ 22-րդ հոդվածով սահմանված ***ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված*** գործը հանձնվում է այլ դատարանի քննությանը, եթե պատասխանողը մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելն առարկում է գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

1. Դատական կարգով ամուսնալուծվելիս, ինչպես նաև անկախ քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում ամուսնալուծվելիս ամուսինները կարող են դատարան ներկայացնել համաձայնություն այն մասին, թե նրանցից ում հետ են ապրելու երեխաները, երեխաներին և (կամ) անաշխատունակ անապահով ամուսնուն պահելու համար ապրուստի միջոցները հոգալու կարգի, այդ միջոցների չափերի կամ ամուսինների ընդհանուր գույքի բաժանման մասին:

2. Ամուսինների միջև համաձայնության բացակայության դեպքում ***դատարանը պարտավոր է՝***

ա) որոշել, թե ամուսնալուծությունից հետո ծնողներից ում հետ պետք է ապրեն երեխաները.

բ) որոշել, թե որ ծնողից և ինչ չափով պետք է ալիմենտ (ապրուստավճար) բռնագանձվի.

գ) ամուսինների (ամուսիններից մեկի) պահանջով կատարել նրանց ընդհանուր սեփականությունը համարվող գույքի բաժանումը.

դ) ամուսնուց ապրուստի միջոց ստանալու իրավունք ունեցող մյուս ամուսնու պահանջով որոշել այդ միջոցների չափը:

Վերը նշված իրավակարգավորումների համակարգային վերլուծությունից հետևում է, որ Օրենսգրքով սահմանված ընդհանուր կանոնի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի դատարան: Ընդ որում, օրենսդիրը սահմանել է, որ եթե քաղաքացին չունի հաշվառման վայր, ապա այդ դեպքում հայցադիմումը կարող է ներկայացվել նրա բնակության վերջին հայտնի վայրի դատարան:

Ընդհանուր կանոնից բացառությունները սահմանված են Օրենսգրքի **22-րդ,** 23-րդ և 24-րդ հոդվածներով, որոնք վերաբերում են **այլընտրանքային,** պայմանագրային և բացառիկ տարածքային ընդդատության կանոններին:

Այլընտրանքային տարածքային ընդդատության կանոնները սահմանված են Օրենսգրքի 22-րդ հոդվածով, որոնք հայց ներկայացնողին հնարավորություն են ընձեռում իր հայեցողությամբ ընտրել իրավասու առաջին ատյանի դատարաններից որևէ մեկը:

Հետևաբար, այս դեպքում հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծող դատարանը չի կարող հրաժարվել այն վարույթ ընդունելուց, կամ վարույթ ընդունելուց հետո ուղարկել ըստ ընդդատության միայն այն պատճառաբանությամբ, որ հայցվորը հնարավորություն ուներ դիմելու նաև այլ իրավասու դատարանի:

Հարկ է նկատել, որ այլընտրանքային տարածքային ընդդատության կանոններ են պարունակում նաև Օրենսգրքի 22-րդ հոդվածի 4-րդ և 7-րդ մասերով նախատեսված իրավակարգավորումները:

Օրենսդիրը, ի տարբերություն բացառիկ տարածքային ընդդատության դեպքերի, իրավասու դատարանի ընտրության առումով որևէ իրավակարգավորում չի նախատեսել այն դեպքերի համար, երբ դատարան ներկայացված հայցադիմումն իր մեջ ներառում է ինչպես ընդհանուր տարածքային, այնպես էլ՝ այլընտրանքային տարածքային ընդդատության կանոնների կիրառման հնարավորություն ընձեռող պահանջներ:

Հարկ է նշել այն հանգամանքը, որ այլընտրանքային տարածքային ընդդատության կանոններով ներկայացված հայցերով հիմնականում շոշափվում են էական, առաջնային պաշտպանության կարիք ունեցող հարցեր, ինչպես նաև այն հանգամանքը, որ օրենսդիրն ընդհանուր տարածքային ընդդատության նկատմամբ դրանցով սահմանել է բացառություն, մասնավորապես՝ այլընտրաքային տարածքային ընդդատության հիմքերի առկայության դեպքում ընդհանուր տարածքային ընդդատությունից շեղվելու օրենսդրորեն ապահովված հնարավորություն: Հետևաբար, այն դեպքերում, երբ ներկայացված հայցադիմումը, հայցապահանջների

բնույթով պայմանավորված, իր մեջ ներառում է այլընտրանքային տարածքային ընդդատության կանոնների կիրառման հնարավորություն, ապա անկախ այն հանգամանքից, թե առկա են այլ պահանջներ, որոնց նկատմամբ կիրառելի են ընդհանուր տարածքային ընդդատության կանոնները, պետք է առաջնորդվել այլընտրանքային տարածքային ընդդատության կանոններով՝ հնարավորություն ընձեռնելով հայցվորին, իր համար էական, առաջնային պաշտպանության կարիք ունեցող շահերն իր ընտրությամբ պաշտպանելու՝ կամ իր հաշվառման կամ բնակության վայրի դատարանում, կամ էլ ընդհանուր կարգով՝ պատասխանողի հաշվառման վայրի դատարանում:

Հայցադիմումը վարույթ ընդունելիս, ի թիվս այլ հանգամանքների, դատարանը պետք է պարզի արդյոք ներկայացված հայցադիմումում պահպանվել են Օրենսգրքով սահմանված տարածքային ընդդատության կանոնները, և միայն այդպիսիք պահպանված լինելու դեպքում որոշում կայացնի հայցադիմումը վարույթ ընդունելու մասին:

Այդուհանդերձ, եթե դատարանը գործը քննելիս պարզում է, որ այն վարույթ է ընդունել Օրենսգրքի 21-րդ և 22-րդ հոդվածներով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ, ապա այդ գործը պետք է հանձնի այլ դատարանի քննությանը, եթե մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը, առկա է պատասխանողի առարկությունը՝ գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ:

Վերը նշված հիմքով գործն այլ դատարանի քննությանը կարող է հանձնվել այն դեպքում, երբ գործի հանգամանքները թույլ են տալիս փաստելու, որ այն վարույթ է ընդունվել Օրենսգրքի 21-րդ և 22-րդ հոդվածներով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ: Այսինքն՝ գործում առկա փաստական տվյալներն ու ապացույցները պետք է անվիճելիորեն վկայեն այն մասին, որ գործն ի սկզբանե վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների խախտմամբ, և յուրաքանչյուր դեպքում Դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը, քանի որ գործն այլ դատարանի քննությանը հանձնելու համար հիմք կարող է հանդիսանալ ոչ թե ցանկացած, այլ միայն փաստարկված և գործում առկա ապացույցներով հիմնավորված եզրահանգումը:

Տվյալ դեպքում, հայցադիմումում, որպես հայցվոր Հ. Սողոմոնյանի հաշվառման վայրի հասցե, նշված է ք. Երևան, Բաբաջանյան 87 շենք, բնակարան 48, որը հավաստվում է գործում առկա հայցվորի անձնագրի պատճենի ուսումնասիրությամբ:

Հայցադիմումով ներկայացված են ***ամուսնությունը լուծելու,*** անչափահաս երեխայի բնակության վայրը սահմանելու, ***ալիմենտ բռնագանձելու*** և համատեղ ամուսնական կյանքում ձեռք բերված գույքից բաժինն առանձնացնելու մասին պահանջներ:

Հայցադիմումում հայցվորը նշել է նաև, որ պատասխանողի հետ համատեղ ամուսնական կյանքի ընթացքում ունեցել են մեկ երեխա՝ 16.12.2016թ. ծնված Արեն Պողոսի Բաղալյանը: ***Վերջինս ապրում է իր հետ և ինքն է զբաղվում երեխայի խնամքով:***

Այսինքն՝ հայցվորի կողմից Դատարան ներկայացված հայցադիմումն իր մեջ ներառել է նաև գործի այլընտրանքային տարածքային ընդդատության կարգով գործի քննության իրականացման հնարավորություն ընձեռող փաստակազմ և Դատարանի կողմից հայցը վարույթ ընդունելիս պահպանվել են ընդդատության կանոնները:

Մինչդեռ, Դատարանի (**դատավոր՝ Ա. Մկրտչյան**) կողմից 26.04.2019թ. քաղաքացիական գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին որոշումը, ըստ էության, կայացվել է այն պատճառաբանությամբ, որ գործի շրջանակներում ներկայացվել են ոչ միայն ամուսնությունը լուծելու և ալիմենտ բռնագանձելու մասին պահաջներ, այլ նաև ներկայացվել են անչափահաս երեխայի բնակության վայրը սահմանելու և համատեղ ամուսնական կյանքում ձեռք բերված գույքից բաժինն առանձնացնելու մասին պահանջներ, իսկ անչափահաս երեխայի բնակության վայրը սահմանելու և համատեղ ամուսնական կյանքում ձեռք բերված գույքից բաժինն առանձնացնելու մասին պահանջների մասով հայցադիմումը վարույթ է ընդունվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասով և 22-րդ հոդվածի 4-րդ և 7-րդ մասերով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ: Միաժամանակ պատասխանողի ներկայացուցիչը մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելն առարկել է գործը Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում քննելու վերաբերյալ:

Այլընտրանքային տարածքային ընդդատության կանոնների, դրանց և ընդհանուր տարածքային ընդդատության կանոնների հարաբերակցության վերաբերյալ կատարված վերլուծությունների լույսի ներքո հարկ է փաստել, որ հայցվոր Հասմիկ Սողոմոնյանի կողմից ներկայացված՝ ***ամուսնությունը լուծելու,*** անչափահաս երեխայի բնակության վայրը սահմանելու, ***ալիմենտ բռնագանձելու*** և համատեղ ամուսնական կյանքում ձեռք բերված գույքից բաժինն առանձնացնելու պահանջների մասին հայցադիմումը ենթակա էր քննության հայցվորի հաշվառման վայրը (ք. Երևան, Բաբաջանյան 87 շենք, բնակարան 48) սպասարկող Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից, քանի որ, հայցվորը առաջնորդվելով օրենսդրությամբ իրեն ընձեռնված դատավարական հնարավությունից, իր ընտրությամբ, առաջնայնությունը տալով այլընտրանքային տարածքային ընդդատության կանոններին՝ հայցադիմումը ներկայացրել է իր հաշվառման, և ոչ թե բնակության վայրի դատարան:

Դրանից բացի, հարկ է նշել նաև, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի վերը նշված իրավակարգավորման բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրն առավել նպատակահարմար է համարել երեխայի բնակության վայրը որոշելու, ալիմենտի, ամուսինների միջև ընդհանուր սեփականություն համարվող գույքը բաժանելու, ամուսնուց ապրուստի միջոց ստանալու վերաբերյալ պահանջների քննությունը իրականացնել ամուսնալուծության պահանջի հետ համատեղ՝ մեկ վարույթի շրջանակներում: Ընդ որում, հարկ է նշել նաև, որ ամուսնությունը լուծելու պահանջը, քաղաքացիական գործերի ճնշող մեծամասնությունում, որպես կանոն, վիճելի իրավահարաբերության առանցքն է կազմում, իսկ թվարկված մյուս պահանջները

ծագում են ամուսնությունը լուծելու պահանջի հիման վրա՝ որպես ամուսնաընտանեկան հարաբերությունների դադարման հետևանք:

Նշվածը ևս փաստում է այն մասին, որ սույն քաղաքացիական գործը ենթակա է քննության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում, քանի որ սույն գործով ծագած իրավահարաբերության առանցքային հիմք հանդիսացող՝ ամուսնությունը լուծելու պահանջը, անչափահաս երեխան հայցվորի հետ համատեղ բնակվելու հանգամանքով պայմանավորված, արդեն իսկ, հայցվորի ընտրության դեպքում պետք է անխուսափելիորեն քննության առնվեր հայցվորի ընտրած իրավասու դատարանի կողմից:

Վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները թույլ են տալիս եզրակացնել, որ սույն քաղաքացիական գործն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Ղեկավարվելով Օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ ԵԴ/14050/02/18 քաղաքացիական գործն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

2. Սույն որոշումը և թիվ ԵԴ/14050/02/18 քաղաքացիական գործի նյութերն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

3. Սույն որոշման մեկ օրինակն ուղարկել Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գ. Ֆիդանյանին՝ ի գիտություն:

ԵՐՎԱՆԴ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ